ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

13.05 2013 թվականի N: 114-Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2013 թվականի ընթացքում քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու նպատակով՝ ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի <<բ>> կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի N 624 որոշմամբ սահմանված <<Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու>> կարգի 3-րդ, 11-րդ, 12-րդ կետերի դրույթներով՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2013 թվականի ընթացքում քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու ժամկետացանկը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու առաջադրանքը՝ համաձայն N 3 հավելվածի:
4. Հանձնարարել հանձնաժողովին պլանային ստուգումներն անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի N 624 որոշմամբ սահմանված <<Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու>> կարգի 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերի դրույթների համաձայն:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ:

Ֆ. ՑՈՒԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է